

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2019 թվականի առաջին կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի ընդհանրի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կատարած աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում՝

Կատարվել է 26 տնային այցելություն, կազմակերպվել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և նրանց ընդհանրի կենսապայմանների, սոցիալ-հոգեբանական վիճակի ուսումնասիրություն, ապահովվել երեխայի սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացում, բազմամասնագիտական քննարկումներ, 10 երեխաների վերաբերյալ տեղեկատվությունը մուտքագրվել է «Մանուկ» տեղեկատվական ենթահամակարգ:

Աջակցություն է ցուցաբերվել մարզի 12 կոնֆլիկտային ընդհանրի բռնության կանխարգելման, ընդհանրի հաշտության վերականգնման ուղղությամբ, ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն բռնության ենթարկված անձանց ժամանակավոր ապաստան տրամադրելու գործում. Բաժինը նաև աշխատանքներ է իրականացրել ամուսնալուծության գործընթացում գտնվող և տարածայնություններ ունեցող ընդհանրի հետ՝ իրացնելու ծնողական իրավունքները, պահպանելով երեխայի գերակա շահը.

10 անչափահասներ վերցվել են պրոֆիլակտիկ քարտային հաշվառման, որոնց հետ ուսրիկանության համապատասխան ծառայությունների հետ համատեղ ԸԿԵԻՊ բաժինն աշխատանքներ է տարել հանցագործությունների կանխարգելման, իրավունքների ու շահերի պաշտպանության և կրկնահանցագործության բացառման ուղղությամբ, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների հետ, մասնակցել է իրավախախտ անչափահասների հետ տարվող քննչական գործողություններին, ՀՀ ուսրիկանության միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստերին.

Բաժինը սերտորեն համագործակցել է խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ, մասնակցել հանձնաժողովների այն նիստերին, որտեղ քննարկվել են երեխայի հետ կապված հատուկ դեպքերը.

Ապահովվել է առանց ծնողական խնամքի մնացած երեխայի իրավունքների պաշտպանությունը, համապատասխան կառույցների հետ համագործակցության շնորհիվ առանց ծնողական խնամքի մնացած 2 երեխա տեղավորվել է շուրջօրյա խնամքի հաստատությունում, ծնողի դիմումի և կենսապայմանների ուսումնասիրության արդյունքում 2 երեխայի տրվել է դրական եզրակացություն խնամքի հաստատությունից կենսաբանական ընդհանրի վերադարձի համար.

Իրականացվել է համագործակցված աշխատանք արդարադատության մարմինների հետ՝ 4 երեխաների ծննդյան վկայականների ձեռքբերման ուղղությամբ .

Բաժինն իրականացրել է աշխատանքներ հանրակրթությունից դուրս մնացած 3 երեխայի հետ, որի արդյունքում երեխաները շարունակել են ուսումը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 5 երեխաների տրամադրել է վկայագրեր, այժմ ներառական կրթություն է ստանում 167 երեխա.

Իրականացվել են 2 որդեգրողի թեկնածու հաշվառված քաղաքացիների կողմից նախընտրած չափանիշներով որդեգրման ենթակա երեխայի վերաբերյալ տեղեկատվության ձեռք բերման և որոնման աշխատանքներ.

Բաժնի և ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրներով զբաղվող միջազգային բարեգործական հիմնադրամների <<Դիակոնիա>>, <<Մանկական զարգացման հիմնադրամ >> հետ համագործակցության շնորհիվ մարզում ներդրվել են աջակցության ծրագրեր, 1 սոցիալապես անապահով ընտանիք ստացել է հումանիտար օգնություն.

Բաժինը շահագրգիռ կառույցների հետ համատեղ մասնակցել է ընտանիքի, կանանց և երեխաների հիմնախնդիրներին նվիրված կյոթ սեղանների, դասընթացների և քննարկումների.

Իրականացվել է քաղաքացիների ընդունելություն, ուսումնասիրվել է դիմումները, բողոքները և առաջարկությունները, անհրաժեշտության դեպքում տրվել մեթոդական պարզաբանումներ, տրամադրել խորհրդատվական օգնություն և 50 ֆինանսական աջակցություն.

Համայնքնեում իրականացվել է մասնագիտական հսկողություն ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի մասով:

ԸԿԵԻՊ բաժնի պետ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հուլիս 2019թ.